**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 15 հունիսի 2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը (ԳԱ), Տ. Բոյախչյանը (ԲԱ) և Ս. Ալեքսանյանը (ԲԱ):
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հայտերի բացման մասին**
**Սահմանված ժամկետում** www.armeps.am **կայքի միջոցով <<ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա>>ծածկագրով ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| <<Արփա-Սևան>>ԲԲԸ | ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ. 012211111(107) | info@arpa-sevan.am |

Ջրային կոմիտեի կարիքների համար <<Արփա-Սևան>> ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման ու արդիականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա>>ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2021 թվականի մայիսի 26-ին, ժամը 16:30-ին:

**Մասնակիցների կողմից առաջարկված գինը.**

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1**<br>/նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 104 924 500 ՀՀ դրամ/<br>Շինարարական աշխատանքներ հիդրոմեխանիկական կառույցների համար--<br><<Արփա-Սևան>> ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման ու արդիականացման աշխատանքների | | | | |
| 1 | <<Արփա-Սևան>>ԲԲԸ | 121 044 480 /հարյուր քսանմեկ միլիոն քառասունչորս հազար չորս հարյուր ութսուն/ ՀՀ դրամ | 24 208 900 /քսանչորս միլիոն երկու հարյուր ութ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ | 145 253 370 /հարյուր քառասունհինգ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ |

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը.**

---

Մասնակից ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

Մասնակից ընկերության՝ <<Արփա-Սևան>>ԲԲԸ-ի կողմից ներկայացված <<Գնային առաջարկ>> Հավելված 2-ը ներկայացված է թվաբանական անճշտություններով (ԱԱՀ սյունակում լրացված թվի հաշվարկը պարունակում է սխալ և ընդհանուր գին սյունակը չի համապատասխանում արժեք և ԱԱՀ սյունակների ընդհանուր գումարին (և՛ տառերով, և՛ թվերով)):

**Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից տարամեկնաբանության առիթ է հանդիսացել <<Արփա-Սևան>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված <<Գնային առաջարկ>> Հավելված 2-ում ներկայացված թվաբանական անճշտությունները:

**Հանձնաժողովը որոշեց.**

Նշվածի վերաբերյալ գրավոր դիմել (08.06.2021թ.) և ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը՝ որպես գնումների գործընթացը համակարգող լիազոր մարմին:

14.06.2021թ. ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը (կցվում է):

**<<ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա>> ծածկագրով ընթացակրգի գնահատող հանձնաժողովի որոշումը**

---

Քննարկման արդյունքում հանձնաժաողովի անդամները հայտնեցին կարծիքներ: Հանձնաժողովի անդամ Ս. Ալեքսանյանը ներկայացրեց իր դիրքորոշումը գրավոր (կցվում է):

Հիմք ընդունելով <<ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա>> ծածկագրով հրավերի 8.2 կետը. այն է <<Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:>> հանձնաժողովը որոշեց.

1. <<Արփա-Սևան>> ԲԲԸ-ի կողմից <<ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա>> ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտը մերժել,
2. Հրապարակել հայտարարություն ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել լիազոր մարմնի պարզաբանում ստանալուց հետո, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-1
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | | Գ. Ալոյան |
| անդամներ | | Ա. Սիմոնյան |
| | | Տ. Բոյախչյան |
| | | Ս. Ալեքսանյան |
| Քարտուղար | | Ա. Սարգսյան |

# ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Թիվ «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա» ծածկագրով բաց մրցույթով

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ **Ջրային կոմիտե**) կողմից 16.04.2021թ-ին հայտարարվել է Ջրային կոմիտեի կարիքների համար «Շինարարական աշխատանքներ հիդրոմեխանիկական կառույցների համար» ձեռքբերման «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/4-Ա» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ **Մրցույթ**): Մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Արփա Սևան» ԲԲԸ-ն:

Հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ մասնակիցը, գնային առաջարկի հետ մեկտեղ, գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, որը ներկայացրել է առանձին տողով: Ավելացված արժեքի հարկի հաշվարկից պարզվել է, որ այն 24.208.896 ՀՀ դրամի փոխարեն հաշվարկվել է 24.208.900 ՀՀ դրամ (4 ՀՀ դրամ տարբերությունը հաշվարկվել է ի վնաս մասնակցի և ի օգուտ ՀՀ պետական բյուջեի): Նշվածի պատճառով, գնահատող հանձնաժողովը որոշել է հայտը մերժել:

Գնահատող հանձնաժողովի անդամ Ս.Ալեքսանյանս գտնում եմ, որ մասնակցի հայտի մերժումը հիմնավորված չէ, հետևյալ իրավակարգավորումներից ելնելով.

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն.**

*«1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:* ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

*3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:* ***Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:****»:*

**ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն.**

*«32. Հրավերով նախատեսվում է նաև, որ՝*

*2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով*

*նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:* ***Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:*** *Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝*

*ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,*

*բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,*

*գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,*

*դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,*

*ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,*

*զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.»:*

Վերոհիշատակված իրավակարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ գնային առաջարկը իրենից ներկայացնում է արժեք, որը բաղկացած է ինքնարժեքից և կանխատեսվող շահույթի հանրագումարից (դրա մեջ չեն ներառվում ցանկացած տեսակի պետական և տեղական հարկեր): Միաժամանակ, ինչպես օրենսդրական, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերով նախատեսված է իմպերատիվ իրավակարգավորում՝ **մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց այդ իրավակարգավորումներում նշված հարկի գումարի հաշվարկման**, իսկ հարկի տեսակը, որին վերաբերում են այդ կարգավորումները՝ ավելացված արժեքի հարկն է:

**ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն.**

*«40. Հայտերի բացման և գնահատման նիստում՝*

*4)* ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին***

***անհամապատասխան**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.»:*

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի իրավակարգավորումը հստակ նշում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ ինչպես արդեն նշվեց, գնային առաջարկը իրենից ներկայացնում է արժեք, որը բաղկացած է ինքնարժեքից և կանխատեսվող շահույթի հանրագումարից, որի մեջ չեն ներառվում հարկերը:

Սույն դեպքում մասնակիցը ներկայացրել է գնային առաջարկ, որը չի հակասում հրավերի պահանջներին, հետևաբար այն ներկա փուլում ենթակա չէ մերժման:

**Գնահատող հանձնաժողովի անդամ** **Ս.Ալեքսանյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 033

N _____

<<_____>> _____20 թ.

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 08.06.2021թ. թիվ
03/05/2120-2021 գրության

Հարգելի տիկին Մարգարյան

Ուսումնասիրելով հիշյալ գրությունը՝ հայտնում ենք, որ բարձրացված հարցադրման հետ կապված հարաբերությունները հստակ կարգավորված են ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությամբ և նույն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով:

Մասնավորապես նշված նորմերի համաձայն՝

-հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

- հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, բացառությամբ նույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:...

Տեղեկացնում ենք նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ նույն օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատ.՝ գնումների քաղաքականության
վարչություն, հեռ.՝ 011-800-258